Հավելված N 408
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
ապրիլի -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) որակի ենթակառուցվածքի զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) տեխնիկական կանոնակարգման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.8-Ղ4-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման ոլորտների քաղաքականության մշակման աշխատանքները.

2. ապահովում է տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման գործընթացում նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների, մասնագիտացված կառույցների, գործարար միջավայրի, օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների համագործակցության աշխատանքները և նախարարության իրավասության ոլորտների նոր տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, գործող տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերանայման գործընթացի իրականացման աշխատանքները.

3. ապահովում է որակի ենթակառուցվածքի բաղկացուցիչ մասեր հանդիսացող

տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման ոլորտների զարգացման միջոցառումների և գործողությունների ծրագրերի մշակման աշխատանքները.

4. ապահովում է ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ շրջանակներում ոլորտային համաձայնագրերի և պայմանագրերի վավերացման և հուշագրերի կնքման գործընթացների հետ կապված աշխատանքները.

5. ապահովում է ոլորտային միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության իրականացումը, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներում համապատասխան համադրությունների, բարենպաստ իրավական կարգավորումների և առաջարկությունների մշակման աշխատանքները.

6. ապահովում է ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

7. ապահովում է մասնակցությունը նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի կամ գործող տեխնիկական կանոնակարգերում, համապատասխանության գնահատման ընթացակարգերում փոփոխությունների կատարման աշխատանքներին.

8. ապահովում է պետական կառավարման մարմինների, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից ներկայացվող տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության, դրանց վերաբերյալ դիրքորոշման ներկայացման աշխատանքները.

9. ապահովում է Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին (կառույցներին) անդամակցելու արդյունքում (դրանց առկայության դեպքում) առաջացող տեխնիկական խոչընդոտների վերացմանն ուղղված օրենսդրությունների ուսումնասիրության, ՀՀ գործող իրավական կարգավորումների հետ համադրության, առկա տարբերությունների բացահայտման աշխատանքները և առաջադրում հնարավոր լուծումներ.

10. ապահովում է ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող տեխնիկական կանոնկարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, քննարկման, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգման ոլորտում ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով՝ շահագրգիռ մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ՝ համապատասխան քննարկումների, տեսակոնֆերանսների կազմակերպման աշխատանքները.

11. ապահովում է ԵՏՀ Կոլեգիայում, Խորհրդատվական կոմիտեում և ԵՏՀ Խորհրդում քննարկվող ոլորտային հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորման և ներկայացման աշխատանքները.

12. ապահովում է մասնակցությունը տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված

միջոցառումներին.

13. ապահովում է մասնակցությունը արտադրանքի անվտանգությանը, դրա նկատմամբ վերահսկողական գործառույթներին և սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող քաղաքականության մշակման, տեսչական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման և առաջարկությունների ներկայացման աշխատանքներին.

14. ապահովում է անվտանգ արտադրանքի ներքին և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտների վերացմանն ուղղված աշխատանքների իրականացումը.

15.ապահովում է Բաժնի ոլորտներին առնչվող գործառույթների, խնդիրների հետ կապված, դրանց վերաբերյալ մասնագիտական պարզաբանումների, վերլուծությունների, պատասխանների պատրաստման, ըստ անհրաժեշտության համապատասխան քայլերի նախաձեռնման, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

16. ապահովում է տեխնիկական կանոնակարգերի ամբողջական կիրարկումն ապահովելու համար գործող տեխնիկական կանոնակարգերի շարունակական մշտադիտարկման իրականացման և ըստ անհրաժեշտության համապատասխան զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների մշակման և ներկայացման աշխատանքները.

17. ապահովում է տեխնիկական կանոնակարգերի մշակման նպատակով ոլորտային միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի նախապատրաստման և ներկայացման աշխատանքները.

18. ապահովում է տեխնիկական կանոնակարգերի ամբողջական համապատասխանության գնահատման նպատակով համապատասխանության գնահատման «բաց» ոլորտների ուսումնասիրման, ներդրումային ծրագրերի առաջարկությունների (փաթեթների) ձևավորման և ներկայացման աշխատանքները.

19. ապահովում է տեխնիկական կանոնակարգման կիրարկումն ապահովող միջազգային, տարածաշրջանային և ազգային ստանդարտների, տեխնիկական պայմանների, համապատասխանության գնահատման ընթացակարգերին առնչվող խնդիրների վերաբերյալ համապատասխանության գնահատման մարմիններից ստացված առաջարկությունների ուսումնասիրությունը և դրանց կարգավորմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը ԵՏՀ:

Իրավունքները՝

- պահանջել տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներում միջազգային կառույցներից՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ), Եվրոպական Միության (ԵՄ), Անկախ պետությունների (ԱՊՀ), ինչպես նաև միջազգային այլ կազմակերպություններից անհրաժեշտ փաստաթղթեր՝ վերջիններիս հետ համագործակցության խորացման ու համատեղ զարգացման ծրագրերի ձևավորման նպատակով.
- ստանալ տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության

գնահատման ոլորտների զարգացման հեռանկարային ուղղվածության ապահովման և գոյություն ունեցող համակարգի բարեփոխման աշխատանքների իրականացման համար ոլորտները կանոնակարգող համապատասխան շահագրգիռ մարմիններից, չափագիտության, ստանդարտացման և հավատարմագրման ազգային մարմիններից, միջազգային տարբեր կառույցներից անհրաժեշտ տեղեկատվություն.

- մասնակցել աշխատանքային քննարկումներին (տեսակոնֆերանսներին) տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներում ԵԱՏՄ, ԱՊՀ և միջազգային կառույցների, տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ.
- պահանջել մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող օրենսդրական և իրավական ակտերի նախագծերի մշակման համար.
- ստանալ առաջարկություններ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ անվտանգությանը, մակնշմանը, համապատասխանության գնահատմանը, արտադրմանը և շուկայահանմանը ներկայացվող արդի պահանջների ներդրման վերաբերյալ.
- կազմակերպել քաղաքացիների ընդունելություն տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ անվտանգության հարցերի հետ կապված, ինչպես նաև մասնագիտական քննարկումներ և տեսակոնֆերանսներ.
- մասնակցել այլ մարմիններում կազմակերպվող նիստերին, խորհրդակցություններին, սեմինարներին, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներին և ընդգրկվել տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող հանձնաժողովների կամ աշխատանքային խմբերի կազմում:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտների միջազգային համակարգերին ինտեգրման աշխատանքները.
- քննարկել տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներում իրավական, ինստիտուցիոնալ և կարողությունների հզորացման և իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների հետ կապված հարցերը.
- հսկել Բաժնի ոլորտներին առնչվող գործառույթների վերաբերյալ մասնագիտական պարզաբանումների, վերլուծությունների, պատասխանների պատրաստման, ըստ անհրաժեշտության համապատասխան քայլեր նախաձեռնելու, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
- քննարկել տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության

գնահատման ոլորտները կանոնակարգող միջազգային, ԵԱՏՄ և ԱՊՀ օրենսդրության և գործելակերպերի ներդաշնակեցմանն ուղղված հարցերը.

• տալ ցուցումներ ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող/վերանայման ենթակա կամ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ քննարկումների, տեսակոնֆերանսների կազմակերպման համար.

• ստուգել պետական կառավարման մարմինների, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից ներկայացվող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման, դրանց վերաբերյալ դիրքորոշման ներկայացման աշխատանքները.

• խմբագրել տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ տրվող պարզաբանումները:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և

ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: